ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

30 մայիսի 2025թ. *ք. Երևան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ՄԽ-Ո-07

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Արուսյակ Ջուլհակյանի, Արթուր Հովսեփյանի, Արուս Հայրապետյանի, Հարութ Ակլունցի և Նինա Փիրումյանի կազմով, 2025թ. մայիսի 30-ին իրականացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի հավակնորդների ներկայացրած փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգում:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի, 1-ին մասի, 2-րդ կետի համաձայն՝ Խորհուրդը սահմանում է մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը: Խորհուրդը 25.04.2025թ. որոշմամբ սահմանել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի

թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Խորհուրդն ուսումնասիրեց հավակնորդ Արտաշես Արտավազդի Խալաթյանի 19.05.2025թ. ներկայացրած հայտը: Հայտի ուսումնասիրության արդյունքում Խորհուրդը՝

ՊԱՐԶԵՑ

Համաձայն Խորհրդի՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին 25.04.2025թ. որոշման՝ հավակնորդը պետք է ներկայացնի մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժը, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից) հավաստող փաստաթղթերի պատճեններ:

Արտաշես Արտավազդի Խալաթյանի 19.05.2025թ. ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրությամբ չէր հաստատվել վերջինիս կողմից կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող պաշտոն առնվազն երեք տարի զբաղեցնելու փաստը:

Ուստի, Խորհուրդը, 21.05.2025թ. նիստի արդյունքներով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.2-րդ հոդվածին համապատասխան, Ազգային ժողովի աշխատակազմի միջոցով Արտաշես Խալաթյանին ծանուցել է հիշյալ փաստաթղթերի բացակայության վերաբերյալ և առաջարկել սույն թվականի մայիսի 27-ը ներառյալ ամբողջականացնել և համապատասխանեցնել իր դիմումին կից ներկայացված փաստաթղթերը Խորհրդի 25.04.2025թ. որոշմամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին:

Արտաշես Արտավազդի Խալաթյանը սահմանված ժամկետում թերություններն ամբողջությամբ չի վերացրել, այն է՝ չի ներկայացրել իր կողմից կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման, գործառույթներ ունեցող պաշտոն առնվազն երեք տարի զբաղեցնելու փաստը հավաստող ապացույցներ:

Հաշվի առնելով, որ հավակնորդի կողմից լրացուցիչ փաստաթղթեր սահմանված ժամկետում չեն ներկայացվել՝ Խորհուրդը 2025թ. մայիսի 30-ին անցկացված նիստում վերջինիս կողմից կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման, գործառույթներ ունեցող պաշտոն առնվազն երեք տարի զբաղեցնելու փաստի առկայությունը գնահատել է ներկայացված փաստաթղթերի (աշխատանքային գրքույկի և աշխատանքի վերաբերյալ տեղեկանքների) ուսումնասիրության արդյունքներով:

Այսպես, Արտաշես Խալաթյանի՝ աշխատանքի վերաբերյալ ներկայացրած տեղեկանքների համաձայն՝ վերջինս.

1. 02.09.2024 թ.-ից մինչ օրս (դիմումի ներկայացման օրվա դրությամբ) աշխատում է «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի Հանրային հաղորդակցության և լրագրության գիտաուսումնական կենտրոնում՝ որպես ի.գ.թ. դասախոս,

2. 14.12.2022 թ.-ից մինչ օրս (դիմումի ներկայացման օրվա դրությամբ) աշխատում է ՀՀ ԳԱԱ «Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի Պետահրավական հետազոտությունների բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող,

3. 07.09.2023 թ.-ից մինչ օրս աշխատում է «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի աշխատակազմում՝ որպես ռեկտորի խորհրդական,

4. 03.04.2023 թ.-ից աշխատում է Սահմանադրական դատարանի դատավորի օգնականի պաշտոնում,

5. ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում 2021-2022 ուսումնական տարում պայմանագրային հիմունքներով դասավանդել է «ՀՀ արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք» և «ՀՀ սահմանադրական իրավունք» առարկաները,

6. 24.09.2021-07.04.2022թթ. զբաղեցրել է Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնը,

7. 07.06.2021-24.09.2021թթ. զբաղեցրել է Վարչապետի աշխատակազմի հանրային խորհրդի քարտուղարության պետի պաշտոնը (պաշտոնի ծածկագիր՝ 06-14-Ղ3-1),

8. 28.10.2021-04.06.2021թթ. աշխատել է Վարչապետի աշխատակազմում՝ որպես պետահիրավական վարչության փորձագետ,

9. սեպտեմբեր 2020թ.-փետրվար 2022թ, հանդիսացել է «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի վերահանձնման հանձնաժողովի անդամ,

10. 12.02.2018-01.06.2020թթ. աշխատել է «Զոհրաբյան և գործընկերներ» փաստաբանական գրասենյակ ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու-փաստաբան,

11. 16.08.2017-05.10.2020թթ. աշխատել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում՝ որպես իրավական հարցերով փորձագետ,

12. 04.05.2017-15.05.2017թթ. աշխատել է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմում՝ որպես պատգամավորի օգնական,

13. 05.09.2014-16.03.2015թթ. աշխատել է «Էյ Էմ իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու,

14. 10.09.2013-05.09.2014թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի միջազգային հարաբերությունների բաժնում՝ որպես մասնագետ,

15. 10.08.2012-02.07.2013թթ. «Մ.Ն.Ա.Ս.» ՍՊԸ-ում աշխատել է որպես իրավախորհրդատու,

16. 14.09.2010-14.10.2010թթ. աշխատել է «Հայինկասացիա» ՓԲԸ-ում՝ որպես ընկերության պայմանագրային աշխատող (իրավաբան),

17. Ըստ «Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի» 2025 թվականի ապրիլի 28-ի տեղեկանքի՝ Արտաշես Արտավազդի Խալաթյանը 2017 թվականի հունվարի 8-ից առ այսօր հանդիսանում է «Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ ՄԱՀՀԻ» հիմնադրամի իրավական հարցերով ավագ փորձագետ: Վերջինս հանդիսանում է «Արդարադատություն, հանցավորություն և ներքին անվտանգություն» ծրագրի ղեկավարը: Այս ծրագրի շրջանակներում Արտաշես Խալաթյանը իրավական թեմաներով հեղինակել է մոտ 2 տասնյակ հետազոտություններ և բազմաթիվ հոդվածներ, որոնք տպագրվել են Հայաստանի առաջատար լրատվամիջոցներում և պարբերականներում:

Ըստ նույն տեղեկանքի՝ Արտաշես Խալաթյանը համակարգել և ղեկավարել է ԱՄՆ «Ժողովրդավարության աջակցության հիմնադրամի» աջակցությամբ և Ինստիտուտի կողմից իրականացող «Ժողովրդավարություն, անվտանգություն և արտաքին քաղաքականություն» ծրագրի երեք խոշոր բաղադրիչ.

1) 2017-2020թթ. Արտաշես Խալաթյանը համակարգել և ղեկավարել է «Ժողովրդավարության երեկոյան դպրոց»-ը, որը ներառում է արտաքին ու ներքին անվտանգության, արտաքին քաղաքականության, պաշտպանության, իրավունքի, տնտեսության, հանրային քաղաքականությունների, կրթության, սոցիալական ու այլ բնագավառներում տարեկան 5 երևանյան դպրոց՝ յուրաքանչյուրը 15-օրյա երեկոյան դասախոսությունների ու գործնական պարապմունքների շարք միջազգային, տարածաշրջանային ու ներքին զարգացումների շուրջ:

2) 2017-2020թթ. «Ժողովրդավարության տարածաշրջանային դպրոց» ենթածրագիրը, որը ներառում է տարեկան 10 երկօրյա ինտենսիվ դասախոսությունների ու գործնական պարապմունքների շարք, որոնք, վերոնշյալներից զատ, ներառում են նաև մարզային կյանքի ու զարգացումների

մասին դասախոսություններ ու աշխատաժողովներ և կազմակերպվում են Հայաստանի բոլոր մարզերում:

Ըստ նույն տեղեկանքում ներառված գործառութային նկարագրի՝ «Ժողովրդավարության երեկոյան դպրոցի» և «Ժողովրդավարության տարածաշրջանային դպրոցի» ուսումնական ծրագրի շրջանակներում Արտաշես Խալաթյանը հանդես է եկել «Սահմանադրություն և ժողովրդավարություն», «Սահմանադրաիրավական անվտանգություն» և այլ թեմաներով դասախոսություններով, իրականացրել իրավական թեմաներով երիտասարդ հետազոտողների հոդվածների մասնագիտական ղեկավարում և խորհրդատվություն, հանրային նշանակություն և (կամ) արձագանք ունեցող իրավական խնդիրների վերաբերյալ իրավաբանական կարծիքների տրամադրում, Հիմնադրամի գործունեության հետ կապված հարցերով իրավախորհրդատվության տրամադրում և ներկայացուցչության իրականացում:

3) ԱՄՆ «Ժողովրդավարության աջակցության հիմնադրամի» աջակցությամբ ՄԱՀՀԻ-ին 2018-2024թթ. իրականացրել է «Աջակցություն ՀՀ դատաիրավական բարեփոխումներին» ենթածրագիրը, և Արտաշես Խալաթյանը 2022-2023թթ. համակարգել է այն ու դրան ասոցացված 2 տասնյակ իրավագետների փորձագիտական խորհուրդը, ինչպես նաև՝ ՄԱՀՀԻ-ն, նրա ղեկավարին և ծրագիրը ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարի 28.02.2022թ. «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների կատարման արդյունավետության և հասարակական վերահսկողության ապահովման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» թիվ 93-Ա հրամանով ձևավորված և նախարարին կից հասարակական խորհրդի և դատաիրավական բարեփոխումների մշտադիտարկման հասարակական կազմակերպությունների խմբում:

Համադրելով Արտաշես Խալաթյանի ներկայացրած՝ աշխատանքի վերաբերյալ տեղեկանքները և դրանցում տրված աշխատանքի նկարագրերը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջներին՝ **Խորհուրդը գտնում է, որ Արտաշես Խալաթյանը չի համապատասխանում «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջին**, այն է՝ վերջինս չունի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում, հետևյալ հիմնավորումներով՝

1. Արտաշես Խալաթյանի՝ հանրային ծառայության ոլորտում աշխատանքային գործունեության վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ միայն երկու զբաղեցրած պաշտոնների դեպքում է նման գործառույթների առկայությունը հավաստվում, որոնց ընդհանուր տևողությունը, սակայն, պահանջվող 3 տարվա ստաժին չի բավարարում: Դրանք են՝

Ա) 24.09.2021-07.04.2022 թթ. Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնը,

Բ) 07.06.2021-24.09.2021թթ. Վարչապետի աշխատակազմի հանրային խորհրդի քարտուղարության պետի պաշտոնը:

2. Ինչ վերաբերում է հավակնորդի աշխատանքային (մասնագիտական) այլ գործունեությանը, հարկ է նկատել, որ Արտաշես Խալաթյանի ներկայացրած տեղեկությունների (մասնավորապես՝ տեղեկանքներում նշված ժամանակագրության) ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջինս՝ «Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ ՄԱՀՀԻ» հիմնադրամի իրավական հարցերով ավագ փորձագետի գործունեությունը որոշակի

ժամանակահատվածներում համատեղել է Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետի և Վարչապետի աշխատակազմի հանրային խորհրդի քարտուղարության պետի հանրային ծառայության պաշտոնների հետ:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:»:

Առաջնորդվելով հավակնորդ Արտաշես Խալաթյանի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածով ամրագրված անհամատեղելիության պահանջները պահպանելու բարեխղճության կանխավարկածով՝ Խորհուրդը եզրահանգում է, որ Ա. Խալաթյանի զբաղեցրած հանրային ծառայության ղեկավար պաշտոններին զուգահեռ՝ «Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտ ՄԱՀՀԻ» հիմնադրամում ավագ փորձագետի կարգավիճակում վերջինիս գործունեությունը կարող է վերաբերել բացառապես գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքին:

Գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքն իր հերթին, «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 12-րդ, 13-րդ և 14-րդ մասերում տրված օրենսդրական սահմանումների հաշվառմամբ, չի կարող դիտարկվել իբրև կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ պարունակող գործունեության տեսակներ:

3. Թեև Խորհրդի՝ վերոնշյալ իրավական մեկնաբանություններն ու եզրահանգումը հիմնված են հավակնորդ Արտաշես Խալաթյանի ներկայացրած փաստաթղթերում ուղղակիորեն արտացոլված փաստական տվյալների (ժամանակագրության) վրա, այդուհանդերձ, Խորհուրդը հարկ է համարում անդրադարձ կատարել նաև «Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի» կողմից տրված տեղեկանքում՝ Ա. Խալաթյանի կատարած աշխատանքների գործառութային նկարագրին՝ փարատելու համար խնդրո առարկա հարցի կապակցությամբ այլ եզրահանգման գալու որևէ կասկած կամ հնարավոր պնդում՝ Ա. Խալաթյանի՝ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնելու և փորձագիտական գործունեության ժամանակագրությունների չհամընկնման անգամ տեսական հնարավորության պարագայում:

Այսպես, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի՝ «Հանձնաժողովի անդամին ներկայացվող պահանջները» վերտառությամբ 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«1. Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, բարձրագույն կրթությամբ և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք, ով ունի առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն երեք տարին՝ քաղաքական, ինքնավար, վարչական կամ օրենքով ստեղծված պետական մարմնի անդամի պաշտոններում կամ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից):»:

Մեջբերվածից նորմի բովանդակության բացահայտման առումով վճռորոշ նշանակություն ունի «կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում (անկախ պետական կամ մասնավոր ոլորտում կատարած աշխատանքից)» պահանջի բացահայտումը:

Այսպես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով:

Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ եթե նորմատիվ իրավական ակտում թվարկված բոլոր պայմաններից բավական է միայն մեկի առկայությունը, ապա չի կարող կիրառվել «և» կամ «ու» շաղկապը, կամ դրանք չեն կարող բաժանվել ստորակետով կամ կետադրական այլ նշանով:

Վերոնշյալ դրույթների համադրված վերլուծությունից բխում է, որ «կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ» ձևակերպումը ենթադրում է նշված բոլոր պայմանների, այսինքն՝ թվարկված բոլոր գործառույթների միաժամանակյա առկայություն:

Հետևաբար, հավաստելու համար, որ առկա է Օրենքի 10-րդ հոդվածի իմաստով՝ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ ունեցող այլ պաշտոններում երեք տարվա աշխատանքային ստաժ, պետք է դիտարկման առարկա դառնա աշխատանքային պարտականությունների (գործառույթների, իրավասությունների) բովանդակությունը՝ դրանց՝ միաժամանակ կազմակերպման, ղեկավարման, վերահսկման և համակարգման բնույթ ունենալու տեսանկյունից:

Վերոնշյալ գործառույթների՝ «կազմակերպման, ղեկավարման, վերահսկման և համակարգման» բնույթի իրավական բովանդակության բացահայտումն իր հերթին ենթադրում է ոլորտի օրենսդրական կարգավորումների համադրված ուսումնասիրություն:

Այսպես, համաձայն ՀՀ առաջին փոխվարչապետի «Քաղաքացիական ծառայության պաշտոնի գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի կազմման, պաշտոնների

ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների և պարտականությունների, անվանացանկի վարման, ինչպես նաև տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու մեթոդաբանությունը հաստատելու մասին» 2019 թվականի հունվարի 11-ի N3-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի՝ *Քաղաքացիական ծառայության պաշտոնն ընդգրկվում է ղեկավար պաշտոնների խմբում, եթե առկա են՝ աշխատանքների կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթներ, ենթակա աշխատողներ, գրասենյակ կամ կառուցվածքային ստորաբաժանում կամ կառուցվածքային ստորաբաժանման կազմում ընդգրկված կառուցվածքային միավորի աշխատանքները ղեկավարելու պահանջ: Այս պահանջների բացակայության դեպքում պաշտոնն ընդգրկվում է մասնագիտական պաշտոնների խմբում:*

Այնուհետև, ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N 873-Ն հրամանով հաստատված հավելվածով զբաղմունքների դասակարգչի՝ «Պարզաբանումներ՝ զբաղմունքների հիմնական խմբերի, ենթախմբերի, փոքր և ստորին խմբերի» մաս 3-ի «Ստորին խումբ 1142. ղեկավարներ՝ հասարակական կազմակերպությունների և միավորումների» 11-րդ կետի համաձայն՝ նրանց (*ղեկավարների*) պարտականությունները ներառում են.

1) կազմակերպության քաղաքականությունը, կանոնադրական նպատակները, խնդիրները և իրավասությունները սահմանելը, ձևավորելը, ծրագրելը և ուղղորդելը.

2) կազմակերպության և դրա անդամների անունից բանակցություններ վարելը.

3) կազմակերպության և դրա անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում և հասարակության առաջ ներկայացնելը.

4) կազմակերպության շարքերում նոր անդամների ընդգրկման և նրանց ուսուցման միջոցառումներ ծրագրելը և կազմակերպելը.

5) իր կանոնադրությամբ սահմանված կարգով նոր ստորաբաժանումներ ստեղծելը, դրանց գործունեությունը ծրագրելը, կազմակերպելը և կառավարելը, կանոնադրական նպատակներին ու խնդիրներին առնչվող աշխատանքներն ուղղորդելը և ծրագրելը.

6) կազմակերպության գործունեության ոլորտներին առնչվող խնդիրների վերաբերյալ խորհրդատվական բնույթի ծառայություններ մատուցելը, պետական ծրագրերի մշակմանը մասնակցելը և դրանց իրագործմանը աջակցելը.

7) հաշվետվություններ պատրաստելը.

8) այլ աշխատողներին ղեկավարելը.

9) սահմանված իրավասությունների շրջանակներում բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

Մեջբերված կարգավորումներից ուղղակիորեն բխում է, որ աշխատանքների կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, համակարգման գործառույթները բնորոշ են պաշտոնների ղեկավար խմբին, որոնց գործառութային նկարագիրը ներառում է այլոց աշխատանքների ղեկավարման ու վերահսկման իրավասություն, կառավարչական բնույթի գործառույթներ և այլն:

Իսկ ինչ վերաբերում է «Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի» տեղեկանքում ներառված աշխատանքային գործունեության նկարագրին, Խորհուրդը գտնում է, որ թեև դրանում տեղ են «համակարգել և ղեկավարել» եզրույթները, սակայն դրանք բովանդակային առումով արտացոլված չեն Արտաշես Խալաթյանի աշխատանքային պարտականություններում, որոնք վերաբերում են մասնագիտական՝ իրավական բնույթի աշխատանքների կատարմանը (իրականացմանը):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և 10.2-րդ հոդվածի 10-րդ և 12-րդ մասերը՝ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հավակնորդ Արտաշես Արտավազդի Խալաթյանի հայտի ընդունումը մերժել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐՈՒՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՐՈՒԹ ԱԿԼՈՒՆՑ

ՆԻՆԱ ՓԻՐՈՒՄՅԱՆ